



Հայաստանի առողիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 5 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քննաթերթ

Հարցեր 1–5	10 միավոր
Իսնդիր 1	25 միավոր
Իսնդիր 2	25 միավոր
Իսնդիր 3	25 միավոր
Իսնդիր 4	15 միավոր
Ընդամենը՝	100 միավոր

Հարցեր 1-5

1. Կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) հաշվարկ:

Տրված են հետևյալ տվյալները՝ Սեփական կապիտալի արժեքը(K_e)՝ 18% , Պարտքային կապիտալի արժեքը(K_d)՝ 9% , Շահութահարկի դրույքաչափը՝ 20% , Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը՝ 1 : 1

Ո՞ր պնդումներն են ճիշտ՝

1. Կապիտալի արժեքը՝ $WACC \approx 12.6\%$
2. Հարկային վահանը նվազեցնում է պարտքի իրական արժեքը
3. Բարձր լծակավորումը միշտ բերում է WACC-ի նվազման
4. Սեփական կապիտալի արժեքը աճում է ռիսկի աճով
5. Իրական պայմաններում WACC-ը կախված է կապիտալի կառուցվածքից

Պատասխաններ

- ա) 1,2,4
- բ) 1,2,5
- գ) 1,2,4,5
- դ) 2,3,5

(2 միավոր)

2. Տեխնոլոգիական ստարտափը գնահատում է ֆինանսավորման տարբերակներ՝ ներառյալ վենչուրային կապիտալ, մասնավոր ներդրում և քրաուդֆանդինգ : Գնահատեք ֆինանսական զեկույցում առկա պնդումները՝

1. Վենչուրային կապիտալը հաճախ ապահովում է նաև կառավարչական և ռազմավարական աջակցություն
2. Մասնավոր ներդրումը միշտ պահպանում է հիմնադիրների վերահսկողությունը
3. Քրաուդֆանդինգը կարող է օգտագործվել որպես շուկայի պահանջարկի նախնական գնահատման գործիք
4. Վենչուրային ներդրողները սովորաբար ունեն հստակ ելքի ռազմավարություն
5. Բանկային վարկը սովորաբար ուղեկցվում է պայմանագրային սահմանափակումներով (covenants – պայմանագրային սահմանափակումներ)

Պատասխաններ

- ա) 1,3,4
- բ) 1,3,4,5
- գ) 2,4,5
- դ) 1,2,5

(2 միավոր)

3. Ընկերությունը կառավարում է արժույթային ռիսկերը՝ օգտագործելով տարբեր գործիքներ: Օգնեք ընկերության ֆինանսական տնօրենին կատարելու ճիշտ ընտրությունը՝

1. Օպցիոնը ապահովում է անբարենպաստ փոխարժեքային փոփոխություններից պաշտպանություն՝ պահպանելով բարենպաստ փոփոխություններից օգտվելու հնարավորությունը:
2. Ֆյուչերսը պարտադիր կատարման պայմանագիր է
3. Բնական հեջավորումը նվազեցնում է, բայց չի վերացնում ռիսկը
4. Սվոփը կարող է կիրառվել երկարաժամկետ հեջավորման համար
5. Արժույթային ռիսկը կարող է ազդել ինչպես դրամական հոսքերի, այնպես էլ շահույթի վրա

Պատասխաններ

ա) 1,2,3,5

բ) 1,2,4,5

գ) բոլորը ճիշտ են

դ) 2,3,4,5

(2 միավոր)

4. Ընկերությունը կիրառում է CAPM մոդելը (կապիտալի ակտիվների գնագոյացման մոդել): Ո՞ր պնդումը կամ պնդումներն են ճիշտ:

1. Բետա գործակիցը չափում է համակարգային ռիսկը
2. CAPM-ը ենթադրում է, որ ոչ համակարգային ռիսկը դիվերսիֆիկացվում է
3. Սեփական կապիտալի արժեքը կախված է շուկայի ռիսկի արեմիումից
4. Beta գործակիցը >1 նշանակում է, որ ակտիվը շուկայից պակաս տատանողական է
5. CAPM մոդելը ունի սահմանափակումներ իրական շուկաներում

Պատասխաններ

ա) 1,3,4

բ) 1,2,3,5

գ) 2,4,5

դ) 1,2,3

(2 միավոր)

5. Ընկերությունը ունի երկու փոխբացառող նախագիծ.

	Նախագիծ A	Նախագիծ B
Սկզբնական ներդրում	500,000	500,000
Զուտ ներկա արժեք (ԶՆԱ)	80,000	100,000
Եկամտաբերության ներքին նորմա/ տոկոսադրույք (ԵՆՆ)	18%	15%

Կապիտալի արժեքը կազմում է 12%:

Տվյալ է նաև, որ A-ն ունի ավելի վաղ դրամական հոսքեր, իսկ B-ն՝ ավելի ուշ:

Հետևյալ պնդումներից ո՞րոնք են ճիշտ՝

1. B նախագծի զուտ ներկա արժեքը գերազանցում է A նախագծի զուտ ներկա արժեքը 20,000-ով, ինչը ԶՆԱ մեթոդով առավելություն է տալիս B-ին

2. A նախագծի Եկամտաբերության ներքին նորմա (ԵՆՆ) -ը 3 տոկոսային կետով բարձր է B նախագծի ԵՆՆ-ից, սակայն դա բավարար հիմք չէ փոխբացառող նախագծի ընտրության համար

3. Չեղձման տոկոսադրույքի աճը սովորաբար նվազեցնում է ուշ դրամական հոսքեր ունեցող նախագծի արժեքը

4. Եկամտաբերության ներքին նորմա (ԵՆՆ) մեթոդը ենթադրում է վերաներդրում նույն ԵՆՆ-ով (վերաներդրման ենթադրություն)

5. ՉՆԱ և ԵՆՆ տարբեր արդյունքները պայմանավորված են դրամական հոսքերի ժամանակային բաշխվածությամբ

6. Երկու նախագծերն էլ ընդունելի են:

ա) 1,3,6

բ) 2,3,4,5,6

գ) 1,2,4,5,6

դ) 1,2,3,4,5

(2 միավոր)

Խնդիր 1

«BEST Doctors»-ը առողջապահական ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպություն է, որն ունի գործող կլինիկա և ներկայումս ստանում է տարեկան \$520,000 զուտ գործառնական շահույթ:

Ընկերության ղեկավարությունը քննարկում է նոր ներդրումային ծրագիր՝ կառուցել ժամանակակից ախտորոշիչ և վիրաբուժական կենտրոն, որը հնարավորություն կտա մատուցել ավելի բարդ և թանկ բժշկական ծառայություններ և ներգրավել ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանից հիվանդներ :

Շուկայի նախնական ուսումնասիրության համար արդեն կատարվել է \$25,000 ծախս:

Նոր բժշկական կենտրոնի սարքավորումների ձեռքբերման և տեղադրման ընդհանուր արժեքը կազմում է \$1,200,000, որը կֆինանսավորվի հետևյալ կերպ. \$900,000՝ կվճարվի անմիջապես մինչև շինարարության սկիզբը, \$300,000՝ կվճարվի 1-ին տարվա վերջում՝ լրացուցիչ սարքավորումների ձեռքբերման համար:

Կենտրոնը նախատեսվում է կսկսի գործել 1-ին տարում, սակայն այդ տարում կաշխատի միայն 70% հզորությամբ:

Սարքավորումները կմաշվեն հաշվապահական նպատակներով ուղիղ գծային մեթոդով՝ 5 տարվա ընթացքում: Ենթադրել, որ հաշվապահական մաշվածքը ընդունվում է նաև հարկային նպատակներով: Ծրագրի ավարտին՝ 5-րդ տարվա վերջում, սարքավորումները հնարավոր կլինի վաճառել \$200,000-ով: Կառաջանան նաև \$20,000 ապամոնտաժման ծախսեր:

Ծրագրի իրականացումը կազդի գործող բիզնեսի վրա. 1-ին տարում շահույթը կնվազի 10%-ով, իսկ 2-5-րդ տարիներին այն կկազմի ներկայիս մակարդակի 105%-ը:

Ծրագրի սկզբում անհրաժեշտ է ներդնել \$90,000 շրջանառու կապիտալ (working capital): Այնուհետև շրջանառու կապիտալը պահպանվում է ընթացիկ տարվա վաճառքների 10%-ի չափով: Բոլոր ներդրումները կվերականգնվեն 5-րդ տարվա վերջում:

Հիվանդների կանխատեսվող տարեկան քանակը և միջին եկամուտը մեկ հիվանդից՝

Տարի	Հիվանդների թիվ	Եկամուտ մեկ հիվանդից
1	1,000	\$450
2	1,400	\$470
3	1,800	\$500
4	2,100	\$520
5	2,300	\$540

Մեկ հիվանդի փոփոխական ծախսը կազմում է եկամտի 50%-ը:

Տարեկան հաստատուն ծախսերը՝

- 1-ին տարի՝ \$280,000
- 2-րդ տարի՝ \$320,000
- 3-րդ տարի՝ \$350,000
- 4-5-րդ տարիներ՝ \$380,000

Լրացուցիչ տվյալներ՝

Ծրագրի սկզբում պետք է իրականացվի \$50,000 վերապատրաստման ծախս (training cost):

Կառավարությունը կտրամադրի \$100,000 դրամաշնորհ՝ 1-ին տարվա վերջին: Ծրագրի կապիտալ ներդրումների 70%-ը նախատեսվում է ֆինանսավորել փոխառությամբ՝ տարեկան

8% տոկոսադրույքով: Սակայն ներդրումային ծրագրի գնահատման ժամանակ պետք է կիրառվի ընկերության կապիտալի միջին կշռված արժեքը՝ 12% :
Շահութահարկի դրույքաչափը՝ 20%: Հարկային վնասները չեն տեղափոխվում ապագա տարիներ:

Ծրագրի գնահատումը պետք է իրականացվի 5 տարվա շահագործման ժամանակահատվածի համար:

Ընկերությունը դիտարկում է նաև այլընտրանքային ներդրումային ծրագիր (նոր վերականգնողական բաժանմունք), որը պահանջում է սկզբնական ներդրում \$800,000 և ակնկալվում է, որ կստեղծի տարեկան կայուն զուտ դրամական հոսքեր \$260,000, 5 տարվա ընթացքում:

Երկու ծրագրերը փոխադարձ բացառող են (mutually exclusive):

Պահանջվում է

ա) Հաշվարկել ծրագրի զուտ ներկա արժեքը (NPV): Եզրակացնել՝ արդյոք ծրագիրը պետք է ընդունել:

(12 միավոր)

բ) Բացատրել, թե որոնք են տվյալ ծրագրին չառնչվող դրամական հոսքերը և նշել առնվազն 2 օրինակ:

(2 միավոր)

գ) Բացատրել, թե ինչ է եկամտաբերության ներքին նորման (IRR, internal rate of return) և ինչպես է այն կիրառվում ներդրումային որոշումների ընդունման ժամանակ: Հիմնավորել՝ արդյոք տվյալ ծրագիրը պետք է ընդունել՝ օգտագործելով IRR-ի գաղափարը:

(3 միավոր)

դ) Համեմատել երկու ծրագրերը և առաջարկել, թե որն է առավել նպատակահարմար ընտրություն՝ հիմնավորելով պատասխանը:

(4 միավոր)

ե) Զննարկել, թե ինչպես կարող է հիվանդների թվի տատանումը ազդել ծրագրի գնահատման վրա և ներկայացնել վերլուծության առնվազն 3 տարբերակ: Հիվանդների թվի կանխատեսումները ենթակա են $\pm 15\%$ տատանման՝ շուկայի անորոշության պատճառով:

(4 միավոր)

(Ընդամենը 25 միավոր)

Խնդիր 2

«Beauty Holding» ընկերությունը զբաղվում է մաշկի և մազերի խնամքի, կոսմետիկ միջոցների արտադրությամբ և վաճառքով: Ընկերությունը ներմուծում է հիմնական հումքը՝ բազային քսուքներ և ակտիվ բաղադրիչներ:

Ընկերությունը նախատեսում է գործունեության ընդլայնում և դիմել է բանկին՝ \$60,000 կարճաժամկետ ֆինանսավորում ստանալու նպատակով: Բանկը պահանջում է ներկայացնել առաջիկա 6 ամիսների կանխիկի բյուջե, ինչպես նաև հիմնավորված վերլուծություն՝ ընկերության իրացվելիության և ֆինանսավորման պահանջի վերաբերյալ:

Տրված տվյալների համաձայն՝ վաճառքի կանխատեսումը հունվարից հունիս ամիսների համար ('000 USD)

Ամիս	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
Վաճառք	100	120	150	170	190	210

Վաճառքների կառուցվածքում մեծաձախ հաճախորդները կազմում են 60%, մանրածախ և սրահները՝ 25%, իսկ ֆիզիկական անձանց վաճառքը՝ 15%, որը ամբողջությամբ իրականացվում է կանխիկ եղանակով:

Մեծաձախ հաճախորդների դեպքում վճարումները կատարվում են մասնաբաժիններով. 20%-ն ույն ամսում, 50%-ն մեկ ամիս հետո, 25%-ն երկու ամիս հետո, իսկ 5%-ը համարվում է անհուսալի պարտք: Նշված տոկոսները կիրառվում են գեղչից հետո մնացորդի նկատմամբ: Մանրածախ հաճախորդների դեպքում 40%-ը վճարվում է մեկ ամիս հետո, 55%-ը՝ երկու ամիս հետո, իսկ 5%-ը չի գանձվում:

Արտադրական ծախսերը կազմում են վաճառքի 80%-ը: Դրանցից 50%-ը վերաբերում է հումքին, 30%-ը՝ աշխատավարձին, իսկ 20%-ը՝ վերադիր ծախսերին: Հումքի մատակարարներին վճարումները կատարվում են հետևյալ կերպ՝ 60% նույն ամսում, իսկ մնացած 40%-ը՝ հաջորդ ամսում: Եթե տվյալ ամսում հումքի գնումները գերազանցում են \$80,000, ընկերությունը ստանում է 10% զեղչ ամբողջ պատվերի նկատմամբ: Շեմը գնահատվում է գեղչից առաջ եղած պատվերի արժեքով:

Վարչական ծախսերը կազմում են \$12,000 ամսական և վճարվում են առաջացման պահին: Այլ վերադիր ծախսերը կազմում են \$4,000 ամսական և վճարվում են մեկ ամիս ուշացումով (դեկտեմբեր ամսվա ծախսը վճարվել է հունվարին): Վարձավճարը կազմում է տարեկան \$24,000 և վճարվում է կիսամյակային կանխավճարով, ընդ որում վերջին վճարումը կատարվել է հունվարի 1-ին՝ ընթացիկ կիսամյակի համար: Մարքեթինգային ծախսերը նախատեսված են հետևյալ կերպ՝ մարտին՝ \$10,000, ապրիլին՝ \$12,000, իսկ մայիս և հունիս ամիսներին՝ \$14,000 յուրաքանչյուր ամիս:

Ապրիլ ամսին ընկերությունը նախատեսում է ձեռք բերել նոր սարքավորում՝ \$20,000 արժեքով, որի վճարումը կատարվելու է ամբողջությամբ տվյալ ամսում:

Ֆինանսական տվյալների համաձայն՝ հունվարի 1-ի դրությամբ ընկերության կանխիկի մնացորդը կազմում է \$5,000: Բանկի կողմից տրամադրված օվերդրաֆտի սահմանաչափը կազմում է \$50,000, իսկ տոկոսադրույքը՝ 1% ամսական: Տոկոսները հաշվարկվում են ամսվա վերջի մնացորդի հիման վրա և վճարվում են հաջորդ ամսում:

Պահանջներ

ա) Կազմել «Beauty Holding» ընկերության 6 ամիսների կանխիկի բյուջեն (cash budget)՝ հունվարից հունիս ժամանակահատվածի համար: Պետք է հստակ ներկայացվեն դրամական մուտքերը և ելքերը, զուտ կանխիկ հոսքերը և յուրաքանչյուր ամսվա վերջի կանխիկի մնացորդը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում օվերդրաֆտի օգտագործումը: Հաշվարկները ներկայացնել '000 USD-ով և ամբողջ թվերով:

(15 միավոր)

բ) Կազմել նույն ժամանակահատվածի համար եկամուտների և ծախսերի հաշվետվությունը: Ներկայացնել համառոտ վերլուծություն՝ շահութաբերության և կանխիկի հոսքերի տարբերությունների վերաբերյալ՝ առնվազն 5 կետ :

(10 միավոր)

Ընդամենը՝ 25 միավոր

Խնդիր 3

«Արև Միսթենա» ՓԲԸ-ն արտադրում և իրացնում է արդյունաբերական վերահսկման մեկ մոդել՝ սմարթ կարգավորիչը: Ընկերությունը կիրառում է նորմատիվային ինքնարժեքի համակարգ, իսկ ամսական կառավարչական հաշվետվություններում համադրում է սահմանային ծախսերով ինքնարժեքի հաշվառման և վերադիր ծախսերի ներառման (կլանման) մեթոդի արդյունքները:

Հուլիս ամսվա համար պլանային արտադրական հզորությունը 12,000 միավոր է: Հաստատուն արտադրական վերադիր ծախսերը կլանվում են պլանային արտադրության հիման վրա՝ ըստ մեկ միավորի: Արտադրանքի ավարտական պաշարները գնահատվում են նորմատիվային ինքնարժեքով:

Նորմատիվային տվյալներն են

Ցուցիչ	Նորմատիվ
Ուղղակի նյութ A	4 կգ յուրաքանչյուր միավորի համար, \$6 մեկ կգ-ի դիմաց
Ուղղակի աշխատանք	2.5 ժամ յուրաքանչյուր միավորի համար, \$14 մեկ ժամի դիմաց
Փոփոխուն արտադրական վերադիր ծախսեր	2.5 աշխատանքային ժամ, \$5 մեկ ժամի դիմաց
Հաստատուն արտադրական վերադիր ծախսեր	\$180,000 ամսական՝ պլանային 12,000 միավորի համար
Պլանային վաճառքի գին	\$110 մեկ միավորի համար

Վաճառքի և վարչական փոփոխուն ծախսը նորմատիվով կազմում է \$4 մեկ իրացված միավորի համար: Վաճառքի և վարչական հաստատուն ծախսերը կազմում են \$52,000 ամսական և արտադրական ինքնարժեքում չեն ներառվում:

Պլանային և փաստացի տվյալներ՝ հուլիս ամսվա համար

Ցուցիչ	Պլան	Փաստացի
Արտադրություն	12,000 միավոր	11,400 միավոր
Իրացում	11,000 միավոր	10,800 միավոր
Մեկ միավորի իրացման միջին գին	\$110	\$113
Ուղղակի նյութերի օգտագործում	48,000 կգ	47,880 կգ
Ուղղակի նյութերի արժեք	\$288,000	\$275,310
Ուղղակի աշխատաժամեր	30,000 ժամ	29,070 ժամ
Ուղղակի աշխատանքի արժեք	\$420,000	\$421,515
Փոփոխուն արտադրական վերադիր ծախսեր	\$150,000	\$150,690
Հաստատուն արտադրական վերադիր ծախսեր	\$180,000	\$191,400
Վաճառքի և վարչական փոփոխուն ծախսեր	\$44,000	\$45,360
Վաճառքի և վարչական հաստատուն ծախսեր	\$52,000	\$55,500

Ընկերության պաշարներն են՝

Ցուցիչ	Քանակ
Սկզբնական պատրաստի արտադրանքի պաշար	600 միավոր
Արտադրություն հուլիսին	11,400 միավոր
Իրացում հուլիսին	10,800 միավոր
Վերջնական պատրաստի արտադրանքի պաշար	1,200 միավոր

Պաշարների սկզբնական մնացորդը գնահատվել է նախորդ ամսվա նույն նորմատիվներով: Գնահատման համար ընդունել, որ փոփոխուն արտադրական ինքնարժեքը և լրիվ արտադրական ինքնարժեքը հաշվարկվում են նորմատիվային դրույքներով:

Պահանջվում է

ա) Հաշվարկել սմարթ մոդելի մեկ միավորի նորմատիվային ինքնարժեքը՝ առանձին ներկայացնելով սահմանային ծախսերով արտադրական ինքնարժեքը և վերադիր ծախսերի ներառման մեթոդով լրիվ արտադրական ինքնարժեքը: (2 միավոր)

բ) Սահմանային ծախսերով ինքնարժեքի հաշվառման մեթոդով պատրաստել հուլիս ամսվա պլանային և փաստացի շահույթի հաշվարկը՝ առանձնացնելով ներդրումային մարժան, արտադրական և ոչ արտադրական հաստատուն ծախսերը: (2 միավոր)

գ) Վերադիր ծախսերի ներառման մեթոդով պատրաստել հուլիս ամսվա փաստացի շահույթի հաշվարկը՝ հաշվի առնելով պատրաստի արտադրանքի սկզբնական և վերջնական պաշարները: Ցույց տալ, թե ինչպես է պաշարների փոփոխությունը ազդում շահույթի վրա: (2 միավոր)

դ) Հաշվարկել և մեկնաբանել հետևյալ շեղումները՝

- ուղղակի նյութերի գնային և օգտագործման շեղումները,
- ուղղակի աշխատանքի վարձաչափի և արդյունավետության շեղումները,

- փոփոխումն արտադրական վերադիր ծախսերի ծախսային և արդյունավետության շեղումները,
- հաստատումն արտադրական վերադիր ծախսերի բյուջետային և ծավալային շեղումները՝ կիրառելով վերադիր ծախսերի ներառման մեթոդը,
- վաճառքի գնի և վաճառքի քանակի շեղումները՝ սահմանային շահույթի հիմքով:

Պահանջվում է յուրաքանչյուր շեղման արդյունքը մեկնաբանել և յուրաքանչյուր հիմնական շեղման համար նշել առնվազն երեք հնարավոր գործառնական պատճառ:

(15 միավոր)

ե) Կազմել համառոտ կառավարչական մեկնաբանություն՝ համադրելով սահմանային ծախսերով և վերադիր ծախսերի ներառման մեթոդներով ստացված արդյունքները: Նշել, թե որ մեթոդն է ավելի նպատակահարմար կարճաժամկետ որոշումների կայացման համար և ինչու:

(4 միավոր)

Ընդամենը՝ 25 միավոր

Խնդիր 4

«Լևոն Փարմ» կազմակերպությունը հանդիսանում է գյուղատնտեսական մեքենաշինության ոլորտում գործող արտադրական ընկերություն, որը վերջին տարիներին ակտիվորեն ընդլայնել է իր արտադրական հզորությունները՝ ներգրավելով զգալի ծավալի երկարաժամկետ փոխառություններ: Ընկերության պարտքային ֆինանսավորման մակարդակն արդեն գերազանցում է ոլորտի միջին ցուցանիշը, ինչը մտահոգություն է առաջացնում ինչպես բաժնետերերի, այնպես էլ հավանական ներդրողների շրջանում:

Բանկը կազմակերպությանը նախագգուշացրել է, որ եթե պարտքային բեռնվածության մակարդակը չնվազի, ապա կազմակերպության ֆինանսավորման պայմանները կարող են վերանայվել: Վարկային պայմանագրի համաձայն՝ կազմակերպության տոկոսավճարների ծածկման գործակիցը չպետք է լինի 4.5 անգամից ցածր:

Ֆինանսական տնօրենը բաժնետերերի ժողովին ներկայացրել է կապիտալի կառուցվածքի բարելավման ծրագիր, որը նախատեսում է իրավունքների թողարկման /rights issue/ իրականացում: Ծրագրի համաձայն՝ ստացված գուտ միջոցներն ուղղվելու են գործող փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ բանկային ֆինանսավորման մի մասի մարմանը:

Առաջարկվում է իրականացնել 1-ը 5-ի դիմաց իրավունքների թողարկում /rights issue/ (այսինքն՝ յուրաքանչյուր 5 առկա բաժնետոմսի դիմաց 1 նոր բաժնետոմս)՝ ընթացիկ շուկայական գնից 25% զեղչով: Թողարկման վարչական ծախսերը կազմում են \$180,000 և հանվելու են ներգրավված միջոցների ընդհանուր գումարից:

Ֆինանսական տեղեկատվություն

Շահույթների և վնասների մասին հաշվետվություն — վերջին ֆինանսական տարի

	Հազար \$
Գործառնական շահույթ (EBIT)	18,600
Տոկոսային ծախսեր	(5,400)
Շահույթ մինչև հարկումը	13,200
Շահութահարկ (20%)	(2,640)
Զուտ շահույթ	10,560
Բաժնետերերին վճարված շահաբաժիններ	(3,100)
Զբաղիված շահույթի ան	7,460

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (քաղվածք հաշվեկշիռ)

	Հազար \$
Սովորական բաժնետոմսեր (անվանական արժեք՝ \$0.50)	5,000
Բաժնետոմսերի հավելավճար	4,200
Զբաղիված շահույթ	14,800
Ընդամենը սեփական կապիտալ	24,000
Փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ բանկային ֆինանսավորում	60,000
Ընդամենը երկարաժամկետ ֆինանսավորում	84,000

Լրացուցիչ տեղեկատվություն

Բաժնետոմսի ընթացիկ շուկայական գին	\$4.80
Շահութահարկի դրույքաչափ	20%
Ոլորտի միջին տոկոսավճարների ծածկման գործակից	6 անգամ
Ոլորտի միջին պարտքային բեռնվածություն	100%

Տնօրենների խորհրդի անդամների մի մասը կասկածի տակ են դնում ծրագրի նպատակահարմարությունը՝ փաստարկելով, որ բաժնետոմսերի թողարկումը կհանգեցնի բաժնեմասային արժեքի նոսրացման և կնվազեցնի բաժնետոմսի շուկայական գինը: Ինչպես նաև նշում են, որ իրավունքների թողարկումը կարող է շուկային փոխանցել ֆինանսական դժվարությունների վերաբերյալ բացասական ազդակ:

Ֆինանսական տնօրենը, սակայն, հակափաստարկ է ներկայացնում՝ ընդգծելով, որ ֆինանսական կայունության բարելավումը, պարտքային բեռի թեթևացումը և վարկային ռիսկի նվազեցումը երկարաժամկետ հեռանկարում կնպաստեն բաժնետերերի հարստության աճին:

Պահանջվում է

(ա) Հաշվել՝

- i. իրավունքների թողարկումից /rights issue/ հետո բաժնետոմսի շուկայական գինը,
- ii. իրավունքների թողարկումից /rights issue/ ներգրավվող զուտ միջոցների գումարը:

(5 միավոր)

(բ) Հաշվել՝

- i. կազմակերպության ընթացիկ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը,
- ii. նոր մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը՝ ենթադրելով, որ իրավունքների թողարկումից /rights issue/ ստացված զուտ միջոցներն ամբողջությամբ ուղղվում են երկարաժամկետ բանկային ֆինանսավորման մասնակի մարմանը:

(5 միավոր)

(գ) Գնահատել և քննարկել իրավունքների թողարկման /rights issue/ ազդեցությունը՝

- i. կազմակերպության պարտքային բեռնվածության մակարդակի վրա՝ օգտագործելով շուկայական արժեքների հիման վրա հաշվարկված ցուցանիշները,
- ii. տոկոսաձածկույթի մակարդակի վրա՝ հաշվի առնելով վարկային պայմանագրերի սահմանափակումները,
- iii. կազմակերպության ֆինանսական ռիսկի և ապագա ֆինանսավորման հնարավորությունների վրա,
- iv. բաժնետերերի հարստության և շուկայի հնարավոր արձագանքի վրա:

Պատասխանում անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորված եզրակացություն:

(5 միավոր)

Ընդամենը՝ 15 միավոր